ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը հայտարարում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1 կտոր հողերի վարձակալության մրցույթ:
Մրցույթը կկայանա 2025 թվականի ապրիլի 9-ին, ժամը 11:00-ին, Ախուրյան համայնքապետարանի վարչական շենքում (Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի 42):
Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2025 թվականի ապրիլի 3-ը ներառյալ:
Հայտերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 13:00-ն, 14:00-ից 17:00-ն ներառյալ (Հայտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի շենքում,2-րդ հարկ, 18 սենյակ):
Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:
Վարձակալության տրամադրվող հողերի նկարագիրը՝
Լոտերի թիվը՝ 1,
Հողերի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի
Վարձակալության տրամադրման ժամկետը՝ 1 տարի,
Մրցույթի ձևը՝ բաց,
Մրցույթի մասնակցության վճարի չափը՝ 2000 ՀՀ դրամ,
Նախավճարի չափը վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%,
Քայլի չափը՝ վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման տրամադրման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
					Հողի կարգ	Ջրովի/անջրդի			
1	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Ազատան	08-004-0669-0056	Արդյունաբերական օբյեկտների	15.01446	-	-	Քարի մշակման սարքավորումներ տեղադրելու և շահագործելու համար	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված, փորձաքննության ենթակա գործունեություն իրականացնելու դեպքում, նախապես սահմանվածկարգով փորձաքննության ենթարկելու պահանջ	2500000